ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 29. Ապացուցման բեռը

1. Եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

2. Ապացուցման բեռը կրում է՝

1) վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով.

2) պարտավորեցման հայցով՝ վարչական մարմինը՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով, և ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ այն փաստերի մասով, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը.

3) գործողության կատարման հայցով՝ վարչական մարմինը՝ հայցվող գործողության կատարումը մերժելու կամ անգործություն ցուցաբերելու համար հիմք հանդիսացած փաստերի մասով, և ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր համար բարենպաստ փաստերի մասով.

4) ճանաչման հայցով՝

ա. ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերի մասով,

բ. վարչական մարմինը՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը հերքող փաստերի մասով,

գ. վարչական մարմինը՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի, ինչպես նաև որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով:

3. Կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտմանը և գնահատմանը՝ անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ ձեռք բերելը: Նման դեպքում դատարանը կարող է ապացուցման բեռը դնել խոչընդոտող կողմի վրա՝ անկախ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոններից:

4. Սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~մասով~~ կետով սահմանված գործերով ներկայացված հայցադիմումը պետք է պարունակի փաստական տվյալներ և փաստարկներ, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականություն որակվող վարքագծի կամ կարգավորման առկայությունը, իսկ խտրականությունը բացառող հանգամանքներն ապացուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա:

(29-րդ հոդվածը լրաց. 05.05.21 ՀՕ-197-Ն)

Հոդված 216.6. Հասարակական կազմակերպության կողմից հայց հարուցելը

1. Հասարակական-կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետևյալ ոլորտներում

1)-շրջակա միջավայրի պահպանություն.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն - խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանություն:

2. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասովի 1-ին կետով սահմանված ոլորտներից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է դրանց հետ կապված՝ կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասովի 1-ին կետում նշված նախատեսված համապատասխան ոլորտում:

3) խախտվել է անձանց խմբերի՝ խտրականության չենթարկվելու իրավունքը՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ոլորտից բխող հայցադիմումների դեպքում:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված խախտումը վերաբերում է անձի՝ հաշմանդամություն ունենալու հիմքով խտրականության չենթարկվելու իրավունքին, ապա հասարակական կազմակերպությունը, որի անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են, կարող է ներկայացնել նաև անհատական շահի պաշտպանությանն ուղղված հայցադիմում:Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, կամ խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի՝ խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, և որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից, չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները և օրինական շահերը դատարանում.

2) կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ, և անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ոլորտում:

(216.6-րդ հոդվածը լրաց. 16.12.16 ՀՕ-38-Ն, խմբ., փոփ., լրաց. 05.05.21 ՀՕ-197-Ն)